

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 սեպտեմբերի 2020 թվականի N 1548-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 1514-Ն ՈՐՈՇՄԱՆ¹ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին»² օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 11-ի «Կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված կարանտին սահմանելու մասին» N 1514-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները՝

1) 9-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Սույն հավելվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետից բացառություն է արվում նաև օտարերկրյա պաշտոնական պատվիրակությունների անդամների համար՝ ՊՇՈ հետազոտության բացասական արդյունք ներկայացնելու դեպքում (վերջին 72 ժամ վաղեմությամբ)»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 13.1-ին կետով.

«13.1. Սույն հավելվածի 13-րդ կետով նախատեսված մասնակիցների քանակական սահմանափակումը կիրառելի չէ Հայաստանի Հանրապետության նախագահի, Ամենայն հայոց կաթողիկոսի, Հայաստանի Հանրապետության վարչապետի, Հայաստանի Հանրա-

1. Միասնական կայք 09.07.20-09.20.20

2. ՀՀՊՏ 2018 N 23 (1381), 28.03.18

պետության Ազգային ժողովի նախագահի, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահի կամ Բարձրագույն դատական խորհրդի նախագահի մասնակցությամբ պաշտոնական միջոցառումների (արարողությունների) դեպքերում:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Պաշտոնական հրապարակման օրը՝ 18 սեպտեմբերի 2020 թվական: